Թող յըմ աղէք մեծանան, իմ միզը Թող կտրի. ես խօ էս տե-ղից չըմ կենայ փախի:

22. Ջալալա կնաց Թակեաւորին ասաց: Թակեաւոր կանչեց վեզրին, ասաց. —Ի՞նչ խորհուրթ կը տաք էս պանի խամար:

Վեզիրներ ասացին. —Տաս տարի ժամանակ ինոր, աղէք մեծանան. ինոր միզ նոր կը կտրենք. նա էս տեղից դո՞ր պիտի էրթայ, Թող պընաւորի պէս ներս մնան, սարից ակս չը կենան:

Բ.

23. Լաճեր էլան խինգը տարեկան, լացին, որ մեզ տարէք տուս: Լաճեր կեացին տուս, ճժերի խետ խաղացին, տեսան Կապոտ ծով, ապա չըն կի՛տի ինչ պան ա. մաղեցին կեացին ծովի մօտ: Իրարու կասին, Թէ էս ինչ աղէկ ցորենի արտ ա: Պընաւոր են, տուս չեն էկած, պան չեն տեսած. կեացին ծովու պերան, տեսան որ ճիւր ա. ծովի պերանով կեացին էտ քեարափին մօտեցան:

24. Սանասար ասաց. —Ա՛խպէր, տու կայնի էս տեղ, ես ծարաւ եմ, էրԹամ էստ յախպիւր ճիւր խմեմ կեամ, դոր տու կնայ: Սանասար կնաց էտ ախպիւր, ճիւր խմաւ, էկաւ ախպօր մօտ:

25. Ախպէր տեսաւ Սանասարին, զարմացաւ, ասաց. —Ա՛խ-պէր, ի՞նչ էլաւ քեզ, որ տու էտքան ճոճացար:

Ասաց. —Տու էլ կնայ խմի արի՛, տու էլ ճոճանաս:

Բաղտասարն էլ կնաց էն ճրէն խմաւ, էկաւ ճոճացաւ: Պայց Բաղտասար շատ ծարաւ չէր, ախպօր կէսը խմեց, ախպօր կէս ուժ առեց:

26. Իրիկուն էկան տուն, մէր տեսաւ ինոր աղերքին, չըր ճանչնայ, խարցուց, —Էտ ի՞նչ էլաւ ծեր, որ էտա կիտա[1] ճոճացաք:

Սանասար ասաց. —Էն ծովի ախպրից ճիւր խմայնք, էտա կեաս ճոճացանք:

27. Մէկ օր էլ կեացին ծովի պերան կան կեալիւ, խալի-վոր մարԹմ ըւտոտ էկաւ ինոնց, ասաց. —Սանասար, արի ես քեզ տանեմ էս ծովու կղզին, էնտեղից քեզ կը տամ Թուր կեծակին, Բուռկու Ջալալին, Ձին ու սատաֆին, Գուրզն ի Գօ-րօզին[2]:

28. Սանասարն ախպօրը կասի. —Բա՛ղդասար, տու կայնի

---

1. Չափ. 2. «Գօրօզին»-ի տեղ պատմողը երբեմն «Սամուէլի» էլ էր ասում: